

Տարեկան գինը 10 ռուբլի, կէս տարեկանը
6 ռուբլի:
Առանձին համարները ԱՄՆՆ ՏԵՂ 5 40Պ.
Թիֆլիսում գրվում են խմբագրության մէջ:
Մեր հասցեն՝ Тифлиси, редакция «Мшакъ»
Базарная ул. Д. Тамашева № 16:
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տ է Լ Է Ֆ Օ Ն № 253.

ՄԵԼԻԿ

Խմբագրությունը բաց է առաւօտեան 10—2
(բացի կիրակի և տօն օրերէն):
Յայտարարութիւն ընդունվում է ամեն ինչով
Յայտարարութիւնները համար վճարում են
խւրաքանչիւր տողատեղին 10 կօպէկ.
Տ է Լ Է Ֆ Օ Ն № 253.

ԽՕԼԵՐԱՅՈՎ

Նրա գործադրելու ձևը շատ հասարակ է: Չորիչ մասը հեշտութեամբ
ամբացվում է ամեն մի ծորակի (кранъ) վրա, օրինակ՝ ջրմուղու, հեշ-
տանի և ուրիշ առարկաների: Ամենակեղտոտ ջուրը համարեա թէ վայրկենապէս փոխարկվում է պարզ-բերեղեայ
ջրի և մաքրվում է բակտերիաներէն: Կարճ ժամանակի ընթացքում «**Հ Ի Դ Ի Ռ Օ Լ**» ապարարողը տարածվել է
սասնեակ հազարներով, որը ապացոյց է նրա գործնականութեան: Ամեն մի ապարարողի հետ ուղարկվում են անհրա-
ժեշտ մասերի պաշար և ձեռնարկ: Չորիչ «**Հ Ի Դ Ի Ռ Օ Լ**» գինը միայն—2 ռ. 50 կ.: Ճանապարհածախքը ապավորողի
հաշին.—Եւրօպայի Ռուսաստան—50 կ., Ասիական—75 կ.:
Պատուէրները հասցէագրել՝ Единственному представителю для всей России Торговому Дому Александръ Голь-
дери и К-о. МОСКВА, Садовая-Спасская, Д. Петрова.
(Ն. ու. 4.)

ԱՍՏՄԱՐՈՑ
Մ. Գ. Դ ա մ ի լ յ - Բ է Կ
Ընդունվում է՝ Առաւօտեան 10—2 ժ.
Թիֆլիսում 4—6 ժ.
Հասցէ՝ Ртищевская ул., № 7.
(Ն. 2.) 50—17

ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԱՌԱՋ
I
Այսօրվանից վերսկսում ենք մեր
մշտական զրոյցը «Մշակի» ընթերցող-
ների հետ:
Ողջոյն ընթերցողներին:
Այն խնդիրները, որոնք դրված են
հրապարակի վրա և որոնք հանդէս են
դրվում ներկայումս, ոչ միայն խնդ-
րներ են ինչև ըստ ինքեան հետա-
բերական, այլ և պարտականու-
թիւններ են ժամանակակից հասարա-
կութեան համար:
Այո, պարտականութիւններ:
Մեր ժողովուրդը պատմական մի
շրջան է անցնում, խորապէս ցնցող
մի շրջան, որը չափազանց պա-
տասխանատու դրութիւն է ստեղ-
ծում մեր գործող սերնդի համար:
Արդարեւ, այն մեծ փորձութիւննե-
րը և արհաւիրքները, որոնք անցան
մեր ժողովուրդի գլխով, այն կրիակա-
կան վիճակը, որ ներկայումս ճնշում
է մեր ժողովրդական կեանքը, այն
մեծ քաղաքական հանգոյցները, որոնց
խորշերում տրոբվում են հայութեան
վերաբերեալ խնդիրները, և այն մի
շարք հասարակական-կուլտուրական
պահանջները, որոնք հանդէս են եկել
կեանքի արամբանութեամբ, այդ բո-
լորը առաջ է մղում խոշոր հարցեր—
ինչ դարձան անել ժողովրդական ցա-
ւերին, ի՞նչ դիրք ընել ժողովրդական
դատերը, աշխարհայէս պաշտպանելու
համար, ի՞նչ կազմակերպութիւն տալ
կուլտուրական գործունէութեան:

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

Յառաջագիտութեան մէկ ոտքն ալ դեղ-
րոցն է Պ. Չերազ յառաջագիտութեան ըն-
մէն խառնելով՝ բնականաբար մեծ կարեւո-
րութիւն կուտար դաստիարակութեան և
կրթարաններու: Գործօն տեսող է եղած
Կ. Պօլսոյ Կեդրոնական վարժարանին
դասնազան վարժարաններու մէջ ուսուցչի
պաշտօն վարած է, և Հայաստանը կրթա-
կան հաստատութիւններով զարգացնելու
համար ինքն ալ մեծ դեր մը խաղացել է:
Հայաստանի միտքը մշակելու համար՝ շատ
ընկերութեանց անուններ կը յիշուին. ա-
նոնց պատմութիւնը ուրուագործ Արփիւր
Արփիւրեանի մասնաւորապէս Բարեգործա-
կան և Անձնանուէր ընկերութիւնները կը
դրուտէին. ինչ էր անոնց նպատակը. Ար-
փիւրը կը գրէ. «Բարեգործական ընկերու-
թեան նպատակն էր Կիլիկիան զարգացնել
և Լուսաւորդական և կաթողիկէ զարգացնել հայ
երիտասարդները միաբանեցան այս նպա-
տակին համար: Այդ ընկերութեան մէջ խօ-
սեցան նաև Նալբանդեանց, «Ազատ Աս-
տուած»-ի բաւաստեղծը: Մեծկակ դուռնար
մը հաւաքուելով, կաթողիկէ հայ մը, բրիտի
Շիշմանեան—գրականութեան մէջ և ուրիշ
Ծերենց—Կիլիկիա զնայ ազարակ մը գնե-
լու և երկրագործական վարժարանի մը

*) Տես «Մշակ» № 230.

և այլ տարափոխիկ հիւանդութիւններով անկա-
րելի է վարակվել իթէ գործ է անվում մա-
քուր ջուր: Առաջարկում ենք հէնց այժմ ձեռք
բերել ջուր մաքրելու համար ջրագործի ապա-
րար

„Հիդրիօլ“

անու-
նով:
Պատմական րօպէն առանձին շեշ-
տով հերթական է դարձրել և այն
խոշորագոյն հարցը, որ վերաբերում
է թիւրքաշայերի քաղաքական և կուլ-
տուրական վիճակին և որը միջազգա-
յին վաւերացրելի մէջ յայտնի է
Ինքիլին դաշնագրի 61-րդ յօդուած
անունով:
Աւելի քան երեսուն տարի է, որ
այդ հարցը սուր կերպով դրված է
հրապարակի վրա և մինչև այժմ չէ
ստացել ապահով և բաւարար լուծում:
Այդ հարցին նուիրաբերվեցին հայու-
թեան շատ թանգ բաներ: Հարիւր
հազարաւոր մարդիկ զոհվեցին, տա-
նակ և հարկը միլիոններ հարստու-
թիւններ խլեցին ժողովրդական ան-
դամանից: Հայկական ուղեղի գոր-
ծունէութեան և զգացմունքի արտա-
յայտութեան, հայկական տաղանդի և
ձիրքերի գործադրութեան մի խոշոր
մասը նուիրվեց եղբայրական և ժո-
ղովրդական այն դատի պաշտպանու-
թեանը, որ եւրօպական դիւանդութեան
թիւնը «հայկական հարց» անունով
քաղաքում էր մի աստեղից դէպի մի-
ւր, մշտական խոստումներ տալով ա-
պագայի համար:
Քաղաքական բարդութիւնները ա-
ռաջ են մղել միջազգային մի նոր
կոնֆերենցիայի դուստրում, որը պէտք
է վերաբերի և նորից խմբագրի Բե-
րլինի դաշնագրի յօդուածները, որոնց
թոււմ 61-րդ յօդուածը:
Երեսուն տարվա անօրինակ և ծանր
երկերից յետոյ, Եւրօպայի բազմաթիւ
և հանդիսաւոր խոստումներից յետոյ
միլիթ թիւրքաշայը կարող է կորցնել
և այն, ինչ որ նա շահել է միջազգա-
յին վաւերացրելիութեան:
Իսկ ի՞նչ է մշակել գործող սերուն-
դը թիւրքաշայական դատի պաշտպա-
նութեան համար առաջին միջազ-
գային խորհրդակցութեան առաջ:
Դա մեր սերնդի պատմական պատա-
խանաւորութեան օղակներից մէկն է:

Դժբաղդ է մի ազգի, որի մասնները
թող և տկար են անտեսական և կուլ-
տուրական գործառնութիւնների հա-
մար:
Մենք այդ վիճակի մէջ ենք:
Եւ դա մի աղէտ է, որի դէմ պէտք է
մենք մղաւորուք:

III
Անդրկովկասին վերաբերեալ մի
շարք հարցեր պէտք է շուտով քննու-
թեան նիւթ դառնան պետական բարձր
շրջաններում, Պետական Դուռնայի
նիստերում:

Անդրկովկասում տեղային ինքնա-
վարութիւն կամ դեմստօ հաստատելու
խնդիրը դրված է իրիկ հերթական
նորային հերթական է դիւրացիների
պատասխանութիւնը այն պարտաւորեալ
վիճակից, որ մնացել է ժառանգու-
թեան նախկին ճորտատիրութեան և
հողատիրական մենավաճառութեան
ժամանակից: Հանդէս են դրված դա-
տավարութեան, վարչական և կրթա-
կան կազմակերպութիւնների վերա-
բերեալ մի քանի ծրագրեր:

Այդ և դրանց նման խնդիրների վե-
րաբերութեան մեր գործողների
խմբերը աւելի քան զանազան են
գտնվել: Շատ քիչ ենք յիշում մենք
այդ խնդիրների այնպիսի ուսումնա-
սիրութիւնների, որոնք արտացոլելին
տեղական կեանքի և պահանջների դի-
տակցութիւնը:
Այդպիսի անտարբեր վերաբերմունքի
արդիւնքն այն է, որ մենք չենք տես-
նում մեր երկրի և մեր ժողովուրդի մէջ
հասունացած հասարակական կարծիք,
որը որոշ պահանջներ դնէր հրապա-
րակի վրա, հեղինակաւոր կերպով
նրանց պաշտպանէ և իր ձայնը լսելի
ու յարգելի դարձնէր թէ պետութեան
նրդհանուր հասարակական կարծիքի և
թէ պետական բարձր ատենաների ու
հաստատութիւնների առաջ:

Ներսէս Իրենց վրայ կը հակէր. և ամենէն
աւելի երեսասարդական ոյժը իրենց քա-
շալէր էր. Արփիւր կը գրէ. «Ան այս նոր
սերունդն է, որ 1876-ին ամբողջ Հայաս-
տանի դաստիարակութիւնը իր վրայ առաւ
Երիտասարդները կազմեցին երեք ընկե-
րութեան Հայաստանի մէջ ուսումնաւորա-
նաւորականութիւնը, Արարատեանը, Դարբնա-
սիրաց-Արեւելեանը, Կիլիկիանը: Երիտա-
սարդութիւնները երեք ընկերութիւն՝ Ազա-
տուէր Հայրենասէր և Դարբնասէր Տիկիւնա-
ցը»: Արփիւր Արփիւրեանի ամբարձարնու-
թեան կը ծանրանայ Արարատեան ընկերու-
թեան գործունէութեան վրայ: Իր և պ.
Փորթուգալեանի դերը ընդարձակօրէն նը-
կարագրուած է Պ. Չերազ այդ առթիւ
ձայն կը բարձրացնէ: «Տուր զկայսերն
կայսեր...»: Եւ ի՞նչ է այդ պահանջը:
Կը պահանջէ, որ իր կրթասիրական դե-
րը ճշգրիտ գոյնեղով ուրուագրուի: Ա. Ար-
փիւրը պ. Չերազի կը վերադարձէ Վասպու-
րականի վարժարաններու խափանումը և
զոգուելու իսկ պ. Չերազ դիմել կուտայ,
որ լուրջ դաստիարակներու խորհրդով կը
զոգուի այդ հաստատութիւնը, վասն զի
ծախքը համապատասխան չէր արդեանց,
թէ այն էնարդիւնելու վառարանն էր դար-
ձած, կատարելութեան ուշադրութիւնը կը
զրաւէր իր հակաթիւրք ընթացքով, որով
վասնզի կենթարկուին միւս կրթական կու-
րսը հաստատութիւնները: Պ. Չերազ կը
շնայց ցոյց տալ թէ Նուպար-Շահնապա-
րեան վարժարանի աշակերտները ամենէն
աւելի գործօն դեր մը ունեցին և Հայաս-

խոշոր գործը պահանջում է գործող-
ների մի մեծ քանակ, որոնք իրակա-
նացնէին ամեն մի բարի նպատակ,
ամեն մի լուրջ կուլտուրական ծրա-
գիր:

Մենք առիթներ ունեցել ենք և դար-
ձեալ կուլտուրական խօսելու այդ նպա-
տակները և ծրագրերը մասին ա-
ռաջիկայում:

Այժմ յիշեցնելով մեր ընդգծած
խնդիրները, յիշեցնելով նաև, որ մի
շարք ուրիշ կարեւոր և էական խնդիր-
ներ սպասում են մշակութեան և
լուծման, մենք առաջ ենք մղում հա-
սարակական գործողների, դիտակից
սերնդի պարտականութիւնների խո-
շոր խնդիր:

Այդ պարտականութիւնների առաջ
պէտք է լուծն բոլոր մասնաւոր դի-
տակները, անձնական ձգտումները,
մասնաւորապէս դաւերը և ամենուրեք
ուժեղ կերպով պիտի զգացվի գործող
սերնդի հասարակական պատասխա-
նաւորութեան ձայնը:
Ա. Քալանթար

IV
Այդ պարտականութիւնների առաջ
պէտք է լուծն բոլոր մասնաւոր դի-
տակները, անձնական ձգտումները,
մասնաւորապէս դաւերը և ամենուրեք
ուժեղ կերպով պիտի զգացվի գործող
սերնդի հասարակական պատասխա-
նաւորութեան ձայնը:
Ա. Քալանթար

Կ. Պօլսի պատրիարքի կողմից ամե-
նայն հայոց հայրապետի ընտրութեանը
մասնակցելու համար նշանակված
պատրիարքական տեղապահ Նիդիշ Ե-
պիսկոպոս Իւրեանը չը պէտք է դա-
շվամբան, այլ իր կողմից պէտք է
զայ Յակոբ Եպիսկոպոս Արտ, որ
միևնրէն ժամանակ Ձմիւնիայի առաջ-
նորդի ձայնն ունի:

Երեկ Թիֆլիս հասան Թիւրքիայից
պատգամաւորներ Միսա Զեբազ,
բոքտոր Ն. Տաղաւարեան և Նիպոլոսի
առաջնորդ Աղանունի ծայրագոյն
վարդապետը:

Կ. Պօլսի թեմի կողմից պատգամա-
ւոր ընտրած պ. Ա. Թօգլանը հրա-
ժարված լինելով, ազգային ժողովը
նոր ընտրութիւն է կատարել և ընտրել
է Մարտիրոս Էֆենդի թէլիկեանին,
սկիցի վաճառական:

Կ. Պօլսի ազգային երեսփոխանական
ժողովը իր երկրորդ նիստի մէջ հե-
տեակ կերպով և կարծիք իր դիւանու:
Առանապետ—Միսա Չերազ, ա. դեր-
տեսնապետ—բոքտոր Վ. Թորգոմեան,
բ. դեր-տեսնապետ—Գեորգ Էֆ. Աս-
լանեան, ա. ատենադպիր—Հրանտ Ա-
սատուր, բ. ատենադպիր—Հայկ Խա-
չատուրեան, գ. ատենադպիր—Հիւր-
եան:

Անյայտնի է որ իւրաքանչիւր կրթասէր
երիտասարդը՝ որ անգամ կամ նախագահ
եղած է այդ ընկերութեանց, մեծ եռանդով
աշխատել է մայր հայրենիքի կրթութեան
համար: Չերազ, Արփիւր, Փորթուգալ-
եան խմբին իր նշանաւոր գործիչ՝ ան-
բաժանելի է Հայրենիքի խմբագիր-հիմնա-
դիր պ. Յովհաննէս Շահնապարեան, որ Կով-
կաս իր պատգամաւոր աշխատել է այդ
կրթական ընկերութեանց համար և Ար-
ժուրիկն շուտով համակրելի դարձած:

Ե.

(Կը շարունակվի)

